58

ՄԵՏԱՂԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ 32/18

«02» 07 2018 թ.

ք.Երևան

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի 2018 թ-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսների կանգառի ընթացքում մետաղի ստուգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺԻՆ

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով ծառայությունների մատուցումը կատարել 365 օրվա երաշխիքային ժամկետով:

2.4.3 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.4 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _5_ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7329433 (Յոթ միլիոն երեք հարյուր քսանինը հազար չորս հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ, որից 1221572 (Մեկ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամը կազմում է ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀՀ դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀՀ կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	«Էներգակարգաբերում» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ.,N 3	Հասցեն՝ ք. Երևան, Այգեձորի 67
հ/հ 2473600002170010	հ/հ 1930045795980100
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/ճ	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02205028	ՀՎՀՀ 00082221
Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան	Գլխավոր տնօրեն՝ Ա. Բաղդասարյան
---------- (ստորագրություն) Կ.Տ.	---------- (ստորագրություն) Կ.Տ.

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գին/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	71631100	*ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի 2018 թ-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսների կանգառի ընթացքում մետաղի ստուգման ծառայություններ* **Ծառայության մատուցման ծավալները բերված են Հավելված 1.1ում**	դրամ	7329433	1	ք. Երևան, Արցախի 4-րդ նրբանցք, հ 14	01.08.2018թ-ից մինչև 20.09.2018թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ.,N 3
հ/հ 2473600002170010
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/ճ
ՀՎՀՀ 02205028
Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էներգակարգաբերում» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Այգեձորի 67
հ/հ 1930045795980100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00082221
Գլխավոր տնօրեն՝ Ա. Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի 2018թ. օգոստոս- սեպտեմբեր ամիսների կանգառի ընթացքում կատարվող մետաղի ստուգման ծառայությունների ձեռքբերման գնման **1չափաբաժնով**

Հ/Բ	Տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Քանակ	Միավոր գին ՀՀ դրամ	Ընդհանուր գին ՀՀ դրամ
	Գազատուրբին				
1	Տուրբինի իրանի վերևի և ներքևի կիսամասերի ՏՋ և ԳԱ	դմ^2	*800*	1408	1126400
2	Կոմպրեսորի մուտքային ուղղորդիչ ապպարատը իր թիակներով ՏՋ և ԳԱ	դմ^2	*150*	1408	211200
3	Արտաթորման գազային դիֆուզորի ՏՋ և ԳԱ	դմ^2	*30*	1408	42240
4	Ռոտորի ՏՋ և ԳԱ	դմ^2	*6*	1408	8448
5	Առանցքակալների և նրանց բնիկների ՏՋ և ԳԱ	դմ^2	*30*	1408	42240
6	Կոմպրեսորի ռոտորը ՏՋ և ԳԱ	դմ^2	*100*	1408	140800
7	Ուղղորդիչ թիակների մուտքային և ելքային եզրերի ՏՋ և ԳԱ	դմ^2	*100*	1408	140800
8	Տուրբինայի և կոմպրեսորի իրանների ամրակապեր (գամասեղներ, աղյուսներ) ՏՋ, ՄՓԱ	դմ^2	*20*	762	15240
	Շոգետուրբին				
9	Սևեռող, կարգավորման և շոգետարաթորման փականների իրանի և ներքին դետալների ՏՋ և ԳԱ	դմ^2	*300*	1408	422400
10	Գլանների իրանները արտաքին շառավիղային անցումների ՏՋ և ԳԱ	դմ^2	*1200*	1408	1689600
11	Լիսեռի ՏՋ և ԳԱ	դմ^2	*320*	1408	450560
12	ՑՃ հագցնովի սկավառակների ՏՋ և ԳԱ	դմ^2	*30*	1408	42240
13	Վերջին աստիճանի աշխատանքային թիակների ՏՋ և ԳԱ	դմ^2	*4*	1408	5632
14	Մամլաձիգ աղյուս ՏՋ և ԳԱ	դմ^2	*12*	1408	16896
15	Գամասեղներ Մ42 և ավելին պարուրակային մակերեսի ՏՋ և ՄՓԱ	դմ^2	*96*	762	73152
16	Դիաֆրագմաներ և ուղղորդիչ թիակներ ՏՋ և ԳԱ	դմ^2	*300*	1408	422400
	Գեներատորներ				
17	Հենարանային առանցքակալների և նրանց բնիկների ՏՋ և ԳԱ	դմ^2	*2.3*	1408	3238
	Շոգեկաթսա				
18	HP superheater-ի խողովակներ ՏՋ, ՄՋ, ՈՒՋՀ	կետ	*100*	1108	110800

19	LP superheater-ի խողովակներ ՏՁ, ՄՁ, ՈՒՁՀ	կետ	*100*	1108	110800
20	HP,LP էկրանային խողովակներ ՏՁ, ՄՁ, ՈՒՁՀ	կետ	*200*	1108	221600
21	Էկոնոմայզերի խողովակներ ՏՁ	հատ	*300*	183	54900
22	Էկոնոմայզերի խողովակներ ՈՒՁՀ	կետ	*15*	346	5190
23	Ներցայտման շոգեհովացուցիչի իրանի ՏՁ, ՈՒՁԱ	դմ ^{2}	*37.7*	2173	81922
24	Բարձր և ցածր ճնշման գերտաքացուցիչբերի ցամաքուրդային փականների եռակցման կարանների ՈՒՁ արատանշում	հատ	*10*	19398	193980
25	Ծխնելույզի եռակցման կարանների ՏՁ	զմ	*10*	183	1830
	Կայանային շոգետարեր				
26	ԲՃ արմունկների D300 ՏՁ, ԳԱ	դմ^2	*220*	1408	309760
27	Շոգետարի դրենաժային և այլ շտուցերների եռակցման հատվածամասի ՏՁ և ՈՒՁԱ	դմ^2	*12*	2172	26064
28	HP արմատուրաների իրանի շառավիղային անցումների ՏՁ, ՄՓԱ	հատ	*4*	7933	31732
29	LP արմատուրաների իրանի շառավիղային անցումների ՏՁ, ՄՓԱ	հատ	*2*	7933,5	15867
	Անոթներ				
30	Դեաերատորի կուտակիչ բաք D=2800մմ V=44մ^3 ՏՁ, ՈՒՁՀ	կետ	*30*	529	15870
31	Կոնդենսատորի դրենաժային ընդարձակիչ (Condenser flash tank) ՏՁ, ՈՒՁՀ	կետ	*20*	529	10580
32	Կաթսայի պարբերական փչամաքրման ընդարձակիչ (HRSG blowdown tank) ՏՁ, ՈՒՁՀ	կետ	*20*	529	10580
33	Կաթսայի դրենաժային անոթ (HRSG դրենաժային բաք) ՏՁ, ՈՒՁՀ	կետ	*10*	529	5290
34	Օդի կոմպրեսորների ռեսիվերներ ՏՁ, ՈՒՁՀ	կետ	*40*	529	21160
35	Կաթսայի անընդհատ փչամաքրման ընդարձակիչ (HRSG flash tank) ՏՁ, ՈՒՁՀ	կետ	*30*	529	15870
36	Փակ հովացման համակարգի բաք ՏՁ, ՈՒՁՀ	կետ	*20*	529	10580
	Ընդամենը առանց ԱԱՀ				6107861
	ԱԱՀ				1221572
	ԸՆԴԱՄԵՆԸ				7329433

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ.,N 3
h/h 2473600002170010
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/ճ
ՀՎՀՀ 02205028
Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էներգակարգաբերում» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Այգեձորի 67
h/h 1930045795980100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00082221
Գլխավոր տնօրեն՝ Ա. Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ի ընթացքում՝
1	71631100	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի 2018թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների կանգառի ընթացքում կատարվող մետաղի ստուգման ծառայությունների ձեռքբերման գնման **1չափաբաժնով**	Հանձնման ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ.,N 3
հ/հ 2473600002170010
«Արդշինբանկ» ՓԲԸ-ի Շենգավիթ մ/ճ
ՀՎՀՀ 02205028
Գլխավոր տնօրեն՝ Ս. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էներգակարգաբերում» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Այգեձորի 67
հ/հ 1930045795980100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00082221
Գլխավոր տնօրեն՝ Ա. Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵԿ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺԻՆ